ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԳԾԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Թերթ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
1	Ընդհանուր տվյալներ	ՋԿ-1
2	Նկուղային հարկի հատակագիծ -3.30 նիշով ներքին B1,T3, T4 և K1 համակարգերով	ՋԿ-2
3	Առաջին հարկի հատակագիծ 0.00 նիշով ներքին B1,T3, T4 և K1 համակարգերով	ՋԿ-3
4	B1 համակարգի սխեման	ՋԿ-4
5	T3,T4 համակարգերի սխեմաները	ՋԿ-5
6	K1 համակարգի սխեման	ՋԿ-6
7	Գլխավոր հատակագիծ K1 ներտարածքային համակարգով Մ 1:500	ՋԿ-7
8	K1 համակարգի երկայնական կտրվածքը	ՋԿ-8
9	Աշխատանքային ծավալների ամփոփագիր	ՋԿ-9
10	Աշխատանքային ծավալների ամփոփագիր (շարունակություն)	ՋԿ-10

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԸՍՏ "Ջ և Կ" ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ

Համակարգի անվանումը	Պահանջվող ջրի ճնշումը մ. ջ. ս.	Հաշվարկային ծախսեր			Ծանոթ.
		$м^3$/օր max	$м^3$/ժամ max	լ/վրկ max	
I. Խմելու- տնտեսական ջրամատակարարում (B1)	14	3.0	0.95	1.43	
II. Կենցաղային կոյուղի (K 1)		3.0	0.95	3.03	

Ընդհանուր ցուցումներ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճք համայնքի մանկապարտեզի ներքին և ներտարածքային ջրամատակարարման և կոյուղու աշխատանքային նախագիծը իրականացվել է համաձայն նախագծման առաջադրանքի, ճարտարապետա-շինարարական գծագրերի,գլխավոր հատակագծի, տեխնիկական պայմանների և ՀՀ տարածքում գործող շին.նորմերի և կանոնների: Նախագծով նախագծված են ներքին և ներտարածքային Ջ և Կ հետևյալ համակարգերը`

Ներքին ցանցեր

1. Խմելու-տնտեսական ջրամատակարարում (B1)
2. Տաք ջրամատակարարում (T3, T4)
3. Կենցաղային կոյուղի (K1)

Ներտարածքային ցանցեր

I. Կենցաղային կոյուղի (K1)

Ներքին ցանցեր

1. Խմելու-տնտեսական ջրամատակարարում (B1)

Համակարգը նախատեսված է մանկապարտեզի խմելու-տնտեսական կարիքների համար: Ջրամատակարարումը իրականացվում է կենտրոնի մասնաշենքի նկուղային հարկում գոյություն ունեցող de=40մմ պոլիէթիլենե PE-100 բարձր խտության խմելու ջրի ճնշումային ջրագծից:

Ներքին ցանցը մոնտաժվում է d=40-20մմ պոլիպրոպիլենային խողովակներով և ձևավոր մասերով: Բոլոր անհրաժեշտ տեղերում նախատեսվում է փակող արմատուրա: Ներքին ցանցի խողովակները մոնտաժված են նկուղային հարկով և առաջին հարկով: Ցանկալի է առաջին հարկի խողովակները մոնտաժել հատակի շերտի և սան. հանգույցների հախճասալերի տակ:

2. Տաք ջրամատակարարում (T3 , T4)

Համակարգը նախատեսված է մանկապարտեզի լվացարանների, խոհանոցակոնքերի և ցնցուղարանների տաք ջրամատակարարման համար , որը իրականացվում է մանկապարտեզում նախագծվող արևային տաք ջրամատակարարման համակարգի միջոցով: Նախագծում նախատեսված են ցիրկուլյացիոն ջրագծեր : Ընդունված են d=32-20մմ պոլիպրոպիլենային խողովակներ և ձևավոր մասեր:Անհրաժեշտ տեղերում նախատեսված է փակող արմատուրա: Ներքին ցանցի խողովակները մոնտաժված են նկուղային հարկով և առաջին հարկով, որոնք ջերմամեկուսացված են ռետինե 32-20մմ խողովակներով:Ցանկալի է առաջին հարկի բոլոր խողովակները մոնտաժել հատակի շերտի և սան. հանգույցների հախճասալերի տակ:

3. Կենցաղային կոյուղի (K1)

Համակարգը նախատեսված է մանկապարտեզի սան. տեխնիկական սարքերից, խոհանոցակոնքերից և հոսակներից կենցաղային կեղտաջրերի հեռացման համար: Կեղտաջրերի հեռացումը կատարվում է ինքնահոս , կոյուղու 1 թողարկով (K1-1): Հաշվի առնելով գոյություն ունեցող կեղտաջրերի կուտակման հորի տեղադրված նիշերը, նպատակահարմար է, որ կեղտաջրերը հեռացվեն ոչ թե առանձին թողարկներով, այլ նկուղային հարկում հավաքելով, հեռացվեն մեկ թողարկով Φ150 մմ: Կեղտաջրերը հեռացվում են ներտարածքային կոյուղու ցանցի դիտահոր : Ներքին ցանցը հիմնականում մոնտաժված է նկուղային հարկով և ընդունված են կոյուղու պլաստմասե Φ150 - 50մմ խողովակներ և պլաստմասե ձևավոր մասեր:

Ներտարածքային ցանցեր

1. Կենցաղային կոյուղի (K1)

Համակարգը նախատեսված է մանկապարտեզի կեղտաջրերը ներտարածքային ցանցով հեռացման համար: Կեղտաջրերը ինքնահոս հեռացվում և լցվում են տարածքում գոյություն ունեցող կեղտաջրերի կուտակման հոր (V=80խմ): Ներտարածքային ցանցում նախատեսված են կոյուղու պոլիէթիլենե բարձր խտության գոֆրոխողովակներ Φ150մմ: Բոլոր անհրաժեշտ տեղերում նախատեսված են կոյուղու դիտահորեր: Հորերը կլոր կտրվածքի են, ե/բ էլեմենտներից` ե/բ ծածկի սալերով և միաձույլ բետոնե առվակներով :

Կենտրոնի մասնաշենքում գոյություն ունեցող բոլոր սան.-տեխնիկական սարքավորումները և խողովակները, որոնք չեն օգտագործվում նախագծում, անհրաժեշտ է վերադարձնել և ի պահ տալ գյուղապետարանին: Երեք հատ ապամոնտաժված լվացարանները նորից մոնտաժվում են:

Հողային աշխատանքները և միացումները գոյություն ունեցող ցանցերին կատարել համապատասխան կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությամբ:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



Ծրագրի առաջադրանք` TGQ-02				Լիճքի համայնքի կենտրոնի վերակառուցում մանկապարտեզի տեղակայումով			
				Ջրամատակարարում և կոյուղի	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
					ԱՆ	ՋԿ-1	10
				Ընդհանուր տվյալներ	ԻՆՋԻՆԵՐԻՆԳ ԷՎՐՈՍ ՍՊԸ ENGINEERING EVROS LLC		
Գլխ. մասն.	Ռ.Խաչատրյան						
Պաշտոն	Ազգանուն	ստորագր.					